Հաստատում եմ՝

տնօրեն՝ Ա. Մախմուրյան

# «ՀՀ Արարատի մարզի Լանջազատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՄԿԱ գծով փոխտնօրենի տարեկան աշխատանքային պլան

ՄԿԱ գծով փոխտնօրեն՝ Մելանյա Մարկոսյան

2023-2024

ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՎ ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ:

1. Կազմակերպել և իրկանացնել ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ:
2. Կազմակերպել ղեկավարել սովորողների դաստիարակչական, արտադասարանական արտադպրոցկան աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը:
3. Ապահովել հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: Կազմակերպել միջոցառումներ էքսյուրսիաներ հանդիպումներ սովորողների հանգիստն ու ժամանցը հետաքրքիր բովանդակալից և արդյունավետ իրականացնելու նպատակով:
4. Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվելաձևի նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ. աջակցել աշակերտների ինքնավարությանը:
5. Կազմակերպել ազգային մշակույթին ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, կինոյի և թատրոնի դիտումներ:
6. Հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության, հաճախումների, պատշաճ հագուկապով դպրոց հաճախելու վարքի նկատմամբ:
7. Համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

- *- Գեղագիտական դաստիարակություն*

Գեղագիտական դաստիարակություն՝ սովորողների մոտ սերմանել սեր դեպի արվեստը և մշակույթը, զարգացնել գեղագիտական մտածողություն՝ թանգարաններ, թատրոններ, արվեստի և մշակույթի այլ կենտրոններ այցեր կազմակերպելու միջոցով:

*- Ռազմահայրենասիրական դաստիարակություն*

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն՝ օրախնդիր է դպրոցական տարիքից սկսած սովորողների մոտ զարգացնել և ամրապնդել ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը, սերը և հարգանքը դեպի հարենիքն ու պետությունը: Նրանց մոտ ձևավորել հայրենիքի պաշտպանությանը պարտադիր մասնակցելու գաղափարը:

- *- Ֆիզիկական դաստիարակություն*

Ֆիզիկական և առողջ ապրելակերպի դաստիարակություն՝ զրույցների, քննարկումների միջոցով աշակերտներին ներկայացնել ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի կարևորությունը մարդու կյանքում: Հորդորել աշակերտներին զբաղվել սպորտով և հետևել ճիշտ սննդակարգին, ակտիվ մասնակցություն ցուցաբերել ֆիզկուլտուրայի դասերին և կազմակերպվող սպորտային միջոցառումներին:

- *- Աշխատանքային դաստիարակություն*

Աշխատանքային դաստիարակություն, մասնագիտական կողմնորոշում՝ զրույցների անհատական աշխատանքների միջոցով սովորողների մոտ ձևավորել աշխատասիրություն աշխատելու ցանկություն՝ կարևորելով աշխատանքի դերը անհատի կյանքում տարբե մասնագիտություններն նրա զարգացման գործընթացում: Սովորողներին ներկայացնել ՝ նշելո նրանց առանձնահատկությունները, բարդությունները և կարևորությունը և օգնել սովորողներ իրենց հետագա մասնագիտության ընտրության հարցում:

- *- Հոգևոր դաստիարակություն*

Հոգևոր դաստիարակություն ՝ սովորողների հետ զրույցների և անհատական աշխատանքների միջոցով վերջիններիս մոտ սերմանել սեր և հավատք առ հայ-առաքելական եկեղեցին: Աշխատանքներ տանել աշակերների մոտ հոգևոր արժեքների ձևավորման և ընկալման ուղղությամբ՝ ձևավորելով հարգանք, հանդուրժողականություն և մարդասիրություն:

# ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

| Աշխատանքի բովանդակություն | Կատարող անձ | Կատարման ժամկետը | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|
| 1. Կազմակերպել դասասենյակների, միջանցքների, կաբինետների կահավորման և ձևավորման աշխատանքները: | Դասվարներ Դասղեկներ | Պարբերաբար | |
| 2. վերահսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք: | Տնօրնություն Դասվարներ Դասղեկներ | Ուս տարվա ընթացքում | |
| 3. բուժքրոջ միջոցով անցակցնել զրույց աշակերտների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի, առողջ ապրելակերպի մասին: | Դասղեկ Բուժքրույր | Ուս տարվա ընթացքում | |
| 4. Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության կանոնների պահպանմանը: | Տնտեսվար, Դասղեկներ | Ուս տարվա ընթացքում | |
| 5.Վարքում շեղումներ և վնասակար սովորություններ ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ կազմակերպել անհատական զրույցներ: | Դասղեկներ | Ուս տարվա ընթացքում | |
| 6. Ավագ դպրոցի աշակերտների հետ միջանցքներում կազմակերպել հերթապահություն: | դասղեկներ | Ուս տարվա ընթացքում | |

# ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

| Աշխատանքի բովանդակություն | Կատարող անձ | Կատարման ժամկետը | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|
| 1. Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել դասարանի ծնողական խորհրդի կազմը | Դասվարներ Դասղեկներ | Սեպտեմբերի 1-15ը | |
| 2. Հրավիրել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համտեղ լուծման ենթակա հարցեր: | Տնօրինություն | Սեպտեմբերի 1-10ը | |
| 3. Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ, ընտրել նախագահ, ծնողական խորհրդի անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրությանը: | Տնօրինություն | Սեպտեմբերի 1-10ը | |
| 4. Դասղեկների հետ կազմակերպել տնային այցելություններ, ծնողների հետ զրուցել տնային առաջադրանքները կատարելու համար պայմաններ ստեղծելու օրվա ռեժիմը պահպանելու համար: | Դասվարներ Դասղեկներ | Պարբերաբար | |
| 5.Երեխաների կենսակերպի նրանց ընտանիքների սոցիալական պայմանների ուսումնասիրություն: | Դասվարներ Դասղեկներ | Ուս տարվա սկզբին | |
| 6.Դասարանների աշխատանքներին ծնողների ներգրավում և նրանց հետ միասին միջոցառումների կազմակերպում | Դասվարներ Դասղեկներ | Ուս տարվա սկզբին | |
| 7. Ծնողների համար հոգեբանական խորհրդատվության կազմակերպում | Դասվարներ Դասղեկներ | Ուս տարվա սկզբին | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող անձ | Կատարման ժամկետը | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Դասալսումներ՝ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 2. | Սեմինար խորհրդակցություններ՝ նվիրված դասալսումների վերլուծությանը | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 3. | Մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն ցույց տալ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում: | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 4. | Անհատական աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին ծրագրերի յուրացման,առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացը, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցներով համապատասխան գիտելիքների հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող աշխատանքների արդյունավետ կատարմանը: | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող անձ | Կատարման ժամկետը | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Դասղեկների աշխատանքային պլանների մշակման վերահսկում և ներկայացում հաստատման | Դասղեկներ ՄԿԱ փոխտնօրեն | սեպտեմբեր | |
| 2. | Սեմինար-խորհրդակցություններ դասղեկների հետ | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 3. | Դասղեկական ժամերի մշտադիտարկում | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 4. | Համագործակցել դասղեկների հետ՝ կատարելով սովորողների հետաքրքրությունների և նաասիրությունների ուսումնաասիրում | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 1. | Հետևել նախատեսված միջոցառումների կատարմանը, դասղեկի ժամերի արդյունավետ, նպատակային, հետաքրքիր թեմաներով զրույցներ անցկացնելուն, դասղեկի ժամերի դաստիարակչական կողմը ապահովելու խնդրին | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |

# ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| | Բովանդակությունը | Կատարող անձ | Կատարման ժամկետը | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | Գիտելիքի օր | ՄԿԱ փոխտնօրեն | սեպտեմբերի 1 | |
| 2. | Անկախության օր | ՆԶՊ ուսուցիչ, ՄԿԱ փոխտնօրեն | սեպտեմբերի 20 | |
| 3. | Ուսուցչի օր | ՄԿԱ փոխտնօրեն | հոկտեմբեր | |
| 4. | Սպորտային սեկցիաների կազմակերպում | ՄԿԱ փոխտնօրեն | հոկտեմբեր | |
| 5. | Էքսկուրսիաներ, այցելություն պատմամշակույթային հուշարձաններ, գրողների տուն | ՄԿԱ փոխտնօրեն | պարբերաբար | |
| 6. | ՛՛Դու միշտ արթուն անլռելի զանգակատուն՛՛ | ՄԿԱ փոխտնօրեն | նոյեմբեր | |
| 7. | ՛՛Հայաստան. Վերածնունդ մոխիրներից՛՛ | ՄԿԱ փոխտնօրեն | դեկտեմբեր | |
| 8. | Բանակի օր | ՆԶՊ ուսուցիչ, ՄԿԱ փոխտնօրեն | հունվար | |
| 9. | ՛՛Հեռավոր մեկի անրջանքն եմ սուտ՝ նետված աշխարհի անսուտ երազին՛՛ միջոցառում՝ նվիրված Եղ. Չարենցին | ՄԿԱ փոխտնօրեն | մարտ | |

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Բովանդակություն | Կատարող անձ | Կատարման ժամկետ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|
| 1. Կազմակերպել հանդիպումներ իրավական և իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ: | Հասարակագիտության ուսուցիչ, անչափահասների գծով տեսուչ | Սեպտեմբեր. Ապրիլ | |
| 2. Այցելություն զորամասեր: | Զինղեկ , Դասղեկ | Հոկտեմբեր Մայիս | |
| 3. Կազմակերպել մրցույթներ և վիկտորինաներ իրավական թեմաներով 10-12-րդ դասարանի աշակերտների միջև: | Հասարակագիտության ուսուցիչ, դասղեկներ | Հոկտեմբեր Մարտ | |
| 4. Բոլոր դասարաններում ստեղծել <<ՀՀ պետական խորհրդանիշները >> խորագրով պատի թերթեր: | Դասղեկ | Սեպտեմբեր | |
| 5. 10-12-րդ դասարանների աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել և բացահայտել համայնքային հիմնախնդիրները: Կազմակերպել գրույց - | | | |

| 4. Բոլոր դասարաններում | Դասղեկ | Սեպտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| բանավեճ և քննարկել հիմնախնդրի լուծման եղանակները։<br>6. 9-12-րդ դասարաններում կազմակերպել բանավեճ << Իմ իրավունքները և պարտականությունները >> թեմայով։ | Հասարակագիտության ուսուցիչ Դասղեկներ։ | Նոյեմբեր | |

# ԶՐՈՒՅՑՆԵՐ

| Բովանդակություն | Կատարող անձ | Կատարման ժամկետ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|
| 1. Զրույց 11-րդ դասարանում <<Սեր, ընտանիք, ամուսնություն>> թեմայով | | Հոկտեմբեր-նոյեմբեր | |
| 2. Զրույց 12-րդ դասարանում<<Ը նտանիքը հասարակության հիմնաքարն է >>թեմայով: | | Հոկտեմբեր-նոյեմբեր | |
| 3. Զրույց 8-9-րդ դասարաններում<<Ամենալավ վկայականը բարեկրթությունն է>> թեմայով: | Դասղեկ<br>Բժիշկ<br>Քահանա<br>Անչափահասների գծով տեսուչ | Դեկտեմբեր | ոճան |
| 4. Զրույց 10-րդ դասարանում <<Գիրք կարդալը հոգևոր մարզանք է, մի հրաժարվիր դրանից >> թեմայով: | | Դեկտեմբեր | |
| 5. Զրույց զեկուցումներ 10-12-րդ դասարաններում<br>Ա. <<Անչափահասը և հանցագործությունը>><br>Բ. <<Անչափահասը և թմրանյութը>><br>Գ. <<Աղանդը և անչափահասը>>: | | Պարբերաբար | |
| 6. 10-12-րդ դասարանների աշակերտների հետ անցկացնել քննարկումներ սանիտարահիգենիկ պահանջների, անձնական | Բժիշկ<br>դասղեկներ | Ուստարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| հիգիենայի վերաբերյալ, բացատրել ալկոհոլի, նիկոտինի, թմրանյութերի հետևանքները մարդու առողջության և օրգանիզմի վրա: | | | |

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

| Բովանդակություն | Կատարող անձ | Կատարման ժամկետ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|
| 1. Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանը և ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ , մրցույթեր. | | | |
| Ա. սպորտլանդիա 5-6-րդ դասարանների աշակերտների միջև | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | Հոկտեմբեր | |
| Բ. Սպորտլանդիա 6-7-րդ դասարանների աշակերտների միջև: | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | Նոյեմբեր | |
| Գ. Վազքի մրցույթ 5-7-րդ դասարանների աշակերտների միջև: | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | Մարտ | |
| Դ. Արշավ- էքսկուրսիա 9-12-րդ դասարանների աշակերտների հետ: | Ծնողներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասղեկներ, զինղեկ | Ապրիլ, Մայիս: | |
| աշակերտների միջև. | | | |